

Ա Մ Փ Ո Փ Ի Չ Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի չորրորդ գումարման
յոթերորդ նստաշրջանի արդյունքների մասին
(01.02.2010թ.-10.06.2010թ.)

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի չորրորդ գումարման
յոթերորդ նստաշրջանի ընթացքում գումարվել է 7 քառօրյա և 1 արտահերթ
նիստ, ՀՀ Սահմանադրության 70-րդ հոդվածով սահմանված կարգով, ՀՀ ԱԺ
պատգամավորների նախաձեռնությամբ:

Նստաշրջանի սկզբում հաստատված օրակարգում ընդգրկված էր 120
հարց, որից 62-ը ՀՀ կառավարության օրենսդրական նախաձեռնություններն
էին (2-ը՝ անհետաձգելի), 48-ը՝ ՀՀ ԱԺ պատգամավորներինը, 5-ը՝ համատեղ,
5-ը՝ պարտադիր եւ ըստ անհրաժեշտության քննարկվող հարցեր: Հետագայում
նստաշրջանի օրակարգը լրացվեց ևս 61 հարցով, որից 32-ը ՀՀ
կառավարության օրենսդրական նախաձեռնություններն էին (9-ը՝
անհետաձգելի), 19-ը՝ ՀՀ ԱԺ պատգամավորներինը, որից 3-ը հեղինակները
համարել են արտահերթ, 10-ը՝ պարտադիր և ըստ անհրաժեշտության
քննարկվող հարցեր:

Նստաշրջանի օրակարգում ընդգրկված 181 հարցերից 164-ը օրենքների
նախագծեր կամ նախագծերի փաթեթներ էին, որոնցից գարնանային
նստաշրջանի ընթացքում քննարկվել եւ ամբողջությամբ ընդունվել են 56-ը
(39-ը ՀՀ կառավարության նախաձեռնություններն էին (9-ը՝ անհետաձգելի),
15-ը՝ ՀՀ ԱԺ պատգամավորներինը, իսկ 2-ը՝ ԱԺ պատգամավորների և
կառավարության համատեղ (1-ը՝ անհետաձգելի):

Ամբողջությամբ ընդունված 56 օրենքներից 3-ը մայր օրենքներ էին (3-ն էլ ՀՀ կառավարության նախաձեռնություններ), իսկ 53-ը՝ գործող օրենքներում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին:

Նստաշրջանի ընթացքում Ազգային ժողովը՝

ա) լսեց

-Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2009 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվությունը,

բ) ընտրեց

-ՀՀ ԱԺ Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ,

գ) հաստատեց

-Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը:

Նստաշրջանի ընթացքում վավերացվեցին 23 միջազգային պայմանագրեր, որոնցից 7-ը ֆինանսատնտեսական, 5-ը՝ պաշտպանության, ազգային անվտանգության, 3-ը՝ կրթական, 2-ը՝ ավիացիայի և 6-ը՝ այլ բնագավառներում համագործակցության մասին էին:

Նստաշրջանի ընթացքում 27 պատգամավոր գրավոր և 77 պատգամավոր բանավոր հարցերով դիմել են ՀՀ կառավարությանը: ՀՀ ԱԺ խմբերից և խմբակցություններից 6 հարցապնդում է ներկայացվել ՀՀ կառավարությանը, որոնց տրվել են գրավոր պատասխաններ և որոնցից <<Հայ Յեղափոխական դաշնակցություն>> և <<Օրինաց երկիր>> խմբակցությունների մեկական հարցապնդումներ քննարկվել են ԱԺ-ի նիստում: Հարցապնդումների կապակցությամբ ԱԺ-ն որոշում չի ընդունել: 147 պատգամավոր հանդես են եկել հայտարարությամբ, որից 55-ը վերաբերում էր գործադիրի գործունեությանը:

Նստաշրջանի ընթացքում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը մերժեց.

1. ՀՀ ԱԺ պատգամավոր Լարիսա Ալավերդյանի՝ <<Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նստաշրջանի օրակարգ ընդգրկելու մասին հարցը,

2. ՀՀ ԱԺ պատգամավորներ Անահիտ Բախշյանի և Արմեն Մարտիրոսյանի ներկայացրած <<Հեռուստատեսության և ռադիոյի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագիծը առաջին ընթերցմամբ ընդունելու մասին հարցը,

3. ՀՀ ԱԺ պատգամավորներ Վահան Հովհաննեսյանի, Արմեն Ռուստամյանի, Արտյուշ Շահբազյանի և Արծվիկ Մինասյանի ներկայացրած

<<Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> և <<Ազգային ժողովի կանոնակարգ>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>> ՀՀ օրենքների նախագծերը առաջին ընթերցմամբ ընդունելու մասին հարցը,

4. ՀՀ ԱԺ պատգամավոր Արմեն Մարտիրոսյանի ներկայացրած <<Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագիծը առաջին ընթերցմամբ ընդունելու մասին հարցը:

Մեկ օրենք՝ <<ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>>, ՀՀ նախագահի առարկություններով և առաջարկություններով վերադարձվել է ԱԺ: ԱԺ-ն ընդունել է ՀՀ նախագահի առաջարկություններն ու առարկությունները

Նստաշրջանի ընթացքում ընդունված Հայաստանի Հանրապետության օրենքների շարքում առավել արժանահիշատակ են.

1. <<Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին>> և դրա ընդունմամբ պայմանավորված մի շարք օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ,

2. <<Ապրանքային նշանների մասին>> և դրա ընդունմամբ պայմանավորված մի շարք օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ,

3. <<Երկակի նշանակության ապրանքների արտահանման, Հայաստանի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փախադրման, ինչպես նաև երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության

արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողության մասին>> և դրա ընդունմամբ պայմանավորված մի շարք օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատրելու վերաբերյալ,

4. <<Հեռուստատեսության և ռադիոյի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքները: